600.0485.29.12.20

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 դեկտեմբերի 2020 թվականի №485Ա
քաղ. Երևան

ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍԱԿԱԳՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի №512Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 1-Ի №227Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետը, 21-րդ, 22-րդ հոդվածները, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2005 թվականի սեպտեմբերի 16-ի №125Ն, 2013 թվականի հոկտեմբերի 23-ի №359Ն, 2017 թվականի օգոստոսի 9-ի №344Ն, 2016 թվականի հունիսի 15-ի №166Ա, №167Ա որոշումները և 2015 թվականի հունիսի 17-ի №172Ա որոշման 2-րդ կետով հաստատված «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» փակ բաժնետիրական ընկերության էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիայի պայմանների 10-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Սահմանել՝

   1) «Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության համար երկդրույք սակագնային համակարգում՝

      ա. առաքվող էլեկտրաէներգիայի դրույքը՝ 4.448 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 5.338 դրամ/կՎտժ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը.

բ. հզորության դրույքը՝ 5016.42 դրամ/կՎտ՝ յուրաքանչյուր ամսվա պայմանագրային պատրաստական հզորության համար՝ առանց ավելացված արժեքի հարկի և 6019.7 դրամ/կՎտ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը.

2) «Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազՋԷԿ)» բաց բաժնետիրական ընկերության համար երկդրույք սակագնային համակարգում՝

ա. առաքվող էլեկտրաէներգիայի դրույքը՝ 33.575 դրամ/կՎտժ՝առանց ավելացված արժեքի հարկի և 40.29 դրամ/կՎտժ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը.

բ. հզորության դրույքը՝ 350.61 դրամ/կՎտ՝ յուրաքանչյուր ամսվա պայմանագրային պատրաստական հզորության համար՝ առանց ավելացված արժեքի հարկի և 420.73 դրամ/կՎտ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը.

3) «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» փակ բաժնետիրական ընկերության համակցված շոգեգազային ցիկլով աշխատող էներգաբլոկի համար երկդրույք սակագնային համակարգում՝

ա. առաքվող էլեկտրաէներգիայի դրույքը՝ 1.88 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 2.256 դրամ/կՎտժ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը.

բ. հզորության դրույքը՝ 4418.18 դրամ/կՎտ՝ յուրաքանչյուր ամսվա պայմանագրային պատրաստական հզորության համար՝ առանց ավելացված արժեքի հարկի և 5301.82 դրամ/կՎտ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը.

4) «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» փակ բաժնետիրական ընկերության համար երկդրույք սակագնային համակարգում՝

ա. առաքվող էլեկտրաէներգիայի դրույքը՝ 8.446 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 10.135 դրամ/կՎտժ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը.

բ. հզորության դրույքը՝ 2694.09 դրամ/կՎտ՝ յուրաքանչյուր ամսվա պայմանագրային պատրաստական հզորության համար՝ առանց ավելացված արժեքի հարկի և 3232.91 դրամ/կՎտ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը.

5) «Միջազգային էներգետիկ կորպորացիա» փակ բաժնետիրական ընկերության համար երկդրույք սակագնային համակարգում՝

ա. առաքվող էլեկտրաէներգիայի դրույքը՝ 4.913 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 5.896 դրամ/կՎտժ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը.

բ. հզորության դրույքը՝ 1021.84 դրամ/կՎտ՝ յուրաքանչյուր ամսվա պայմանագրային պատրաստական հզորության համար՝ առանց ավելացված արժեքի հարկի և 1226.21 դրամ/կՎտ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը.

6) «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերության կողմից՝

ա. էլեկտրաէներգետիկական համակարգին էլեկտրական էներգիայի հաղորդման ծառայության մատուցման սակագինը (հաղորդման ցանց մուտք գործած էլեկտրաէներգիայի քանակի համար)՝ 0.38322 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 0.45986 դրամ/կՎտժ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը.

բ. էլեկտրաէներգիա արտահանելու իրավունք ունեցող անձանց էլեկտրական էներգիայի հաղորդման ծառայության մատուցման սակագինը՝ արտահանված յուրաքանչյուր կՎտժ-ի համար՝ 0.38322 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 0.45986 դրամ/կՎտժ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը.

7) «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» փակ բաժնետիրական ընկերության կողմից՝

ա. էլեկտրաէներգետիկական շուկային էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի ծառայության մատուցման հաստատագրված ամսական վճարը՝ 130.0636 միլիոն դրամ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 156.0763 միլիոն դրամ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը.

բ. էլեկտրաէներգիա արտահանելու իրավունք ունեցող անձանց էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի ծառայության մատուցման սակագինը՝ արտահանված յուրաքանչյուր կՎտժ-ի համար՝ 0.2433 դրամ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 0.292 դրամ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը.

8) «Հաշվարկային կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կողմից՝

ա. էլեկտրաէներգետիկական շուկային էլեկտրաէներգետիկական շուկայի օպերատորի ծառայության մատուցման հաստատագրված ամսական վճարը՝ 26.228 միլիոն դրամ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 31.4736 միլիոն դրամ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը.

բ. էլեկտրաէներգիա արտահանելու իրավունք ունեցող անձանց էլեկտրաէներգետիկական շուկայի օպերատորի ծառայության մատուցման սակագինը՝ արտահանված յուրաքանչյուր կՎտժ-ի համար՝ 0.0491 դրամ՝ առանց

ավելացված արժեքի հարկի և 0.0589 դրամ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը:

2. Սահմանել, որ՝

1) հաշվարկային տարվա ընթացքում, սույն որոշման 1-ին կետում նշված ընկերությունների սակագների հաշվարկում ներառված Հայաստանի Հանրապետության կառավարությունից և (կամ) Հայաստանի Հանրապետության կառավարության երաշխիքով ստացված արտոնյալ վարկերի մարման և սպասարկման, իսկ «Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության համար՝ նաև վառելիքային, «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» փակ բաժնետիրական ընկերության համակցված շոգեգազային ցիկլով աշխատող էներգաբլոկի համար՝ նաև նորոգման ծախսերը սակագների հաշվարկներում ներառված մեծությունների համեմատ փաստացի ավելի քիչ ծախսելու դեպքում, այդ ընկերությունները պարտավոր են առաջացող լրացուցիչ դրամական միջոցները կուտակել այդ նպատակով բացված համապատասխան հաշվեհամարին: Նշված միջոցները այլ ծախսային ուղղություններով ծախսվում են միայն Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի որոշման համաձայն.

2) «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերության էլեկտրական էներգիայի հաղորդման ծառայության մատուցման սակագների հաշվարկներում ներառված և փաստացի չծախսված՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունից և (կամ) Հայաստանի Հանրապետության կառավարության երաշխիքով ստացված արտոնյալ վարկերի մարման և սպասարկման գումարներից 2007.14 միլիոն դրամը փոխանցվում է «Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերությանը՝ ատոմային էլեկտրակայանի շահագործման ժամկետի երկարաձգման աշխատանքների ֆինանսավորման նպատակով ներգրավված վարկերի մարման և սպասարկման ծախսերի փոխհատուցման նպատակով:

3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի՝

1) 2019 թվականի դեկտեմբերի 25-ի «Էլեկտրաէներգետիկական համակարգի սակագները սահմանելու և Հայաստանի Հանրապետության հանրային

ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2018 թվականի դեկտեմբերի 27-ի №768Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» №512Ա որոշումը.

2) 2020 թվականի հուլիսի 1-ի «Հայկական ատոմային էլեկտրակայան», «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» փակ բաժնետիրական ընկերություններից, «Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազՋԷԿ)» բաց բաժնետիրական ընկերությունից և «ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» փակ բաժնետիրական ընկերության «Հրազդան-5» կայանից առաքվող էլեկտրական էներգիայի (հզորության) սակագները սահմանելու և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2019 թվականի դեկտեմբերի 25-ի №512Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» №227Ա որոշման 1-ին կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի փետրվարի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
29 դեկտեմբերի 2020թ.